սաստանի մահմեդականութեան Իթթիհատ–Իսլամ կազմակերպութիւնը, 1՝ Ռուս Ժողովրդ. Ազատութեան կուսակցութիւնը, 1՝ վրացի սոց.–ֆեդերալիստները, 1՝ վրացի ազգային–դեմոկրատները:

Սէյմի երրորդ (15 փետրու.) նիստում կուսակցութիւններն արին իրենց յայտարարութիւնները: Հ. Յ. Դաշնակցութեան բաղձանքներն արտայայտեց Յ. Քաջազնունին, հետեւեալ յայտարարութեամբ. «Հ. Յ. Դաշնակցութիւնը ողջունում է հայ դեմոկրատիայի կողմից Անդրկովկասեան Սէյմը:

Սերունդների երազը — Համառուսական Սահմանադիր Ժողովը մի օրուայ համար դարձաւ իրական փաստ: Ժողովրդի ընտրեալները հաւաքւեցին արդէն, որպէսզի իրականացնեն նրա վեհ կամքը և դնեն պետական և ընկերային կեցութեան նոր հիմքերը: Բայց, ընդհանրապէս, բոլոր ընկերային–քաղաքական խորունկ շարժումներին յատուկ անխուսափելի հիւանդագին թեքումը պատակտում մտցրեց յեղափոխական շարժման առողջ ընթացքի մէջ և բնութեամբ ընդհատեց Սահմ. Ժողովի աշխատանքը հէնց սկզբից: Քանի որ կենտրոնական համապետական իշխանութիւնը բացակայ է, ժողովուրդներն ու երկիրները հարկադրւած են տեղերում սեփական ուժերով լուծելու կեանքի հրամայական ընթացքով առաջ եկած ամենէն անյետաձգելի խնդիրները: Կարգաւորելով իրենց կեանքը տեղերում՝ ժողովուրդներն ու երկրները դրանով հէնց դնում են ամուր հիմքը մեծ ամբողջի՝ մէկ համառուսական ռամկավար դաշնակցական հանրապետութեան կառուցման: Նման կազմակերպող կենտրոններից մէկը պէտք է դառնայ Անդրկովկասեան Սէյմը:

Կանգնած լինելով անդրկովկասեան դեմոկրատիայի մէկ և ընդհանրական շահերի պահպանութեան տեսակէտի վրա և յենւելով նրա յեղափոխական մարմինների՝ զինւորական, բանւորական ու գիւղացիական խորհուրդների վրա՝ Անդրկ. Սէյմը կոչւած է, մի կողմից, վերականգնել երկրի կարգն ու անդորրութիւնը, դուրս բերել նրան յարաճուն, քայքայող անիշխանութեան շրջանից և դնել յեղափոխական նւաճումների ամրապնդման ճանապարհի վրա, միւս կողմից՝ յենարան տալ Ռուսաստանի հանրապետութեան, որի մէջ Անդրկովկասը, իբրև մասնիկը հզօր ամբողջութեան, պէտք է գտնի արժանաւոր տեղ:

Մեկնելով Անդրկ. Սէյմի նպատակների նման հասկացողութիւնից՝ Դաշնակցութեան ֆրակցիան դնում է հերթից դուրս պատերազմը վերջացնելու և Ռուսաստանի յեղափոխական դեմոկրատիայի ազդարարած սկզբունքներով հաշտութիւն կնքելու հարցը — հաշտութիւն առանց բռնագրաւումի և ռազմատուգանքի՝ ժողովուրդների ինքնորոշման հիմունքներով: Մեր ճակատում այս սկզբունքը պէտք է յանդի Թիւրքահայաստանի ինքնավարութեան ստեղծման:

Պատերազմի հաշւեյարդարի խնդրի հետ միասին անյապաղ պէտք է լուծւի Անդրկովկասի կենտրոնական իշխանութեան և տեղական իշխանութիւնների կազմակերպման հարցը, իշխանութիւնը պէ՛տք է լինի միատարը— ընկերվարական, որովհետև միայն այդպիսի՛ իշխանութիւնը կարող է իրականացնել աշխատաւոր ժողովրդի ակնկալութիւնները և անհնար դարձնել քաղաքական պատեհապաշտութեան և ընկերային ճահճացման սկզբունքների վերադարձը: Եւ հաշւի առնելով օրուայ ամենաանյետաձգելի պահանջները՝ երկրի իշխանութիւնը պէտք է ձեռք առնէ շտապ և իրական միջոցներ՝ վերականգնելու հաղորդակցութիւնը, լուծելու պարենաւորման ու ելևմտական տագնապը:

Վաղուց ի վեր հասունացած հողային խնդիրը պէտք է լուծում ստանայ հողային մասնատիրութեան խպտառ վերացումով և բոլոր հողերը անյապաղ